Ժ

Ս. ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

(Հառաչումն Պետրոսի)

Արդէն նկարագրեցինք Ս. Փրկչի վանքը որ շինուած էր Կայիափայի տան տեղւոյն վրայ, և ուր Պետրոս առաքեալ ուրացաւ իր վարդապետը և այս դէպքին յիշատակին համար էր՝ որ Հայերը կառուցին նոյն վանքը և արաբացիք անոր Հապս էլ-Մէսիհ անունը կուտան։

Ս. Պետրոսի անուամբ շինուած է Ե. դարուն վանք մը ևս, Սիոն լերան արևելեան կողին վրայ, ի յիշատակ Պետրոս առաքելոյն զղջման և ապաշխարութեան։ Ոմանք խնդիր կը յարուցանեն ըսելով թէ՝ Հայոց Ս. Փրկչի վանքին կառուցումը աւելի վերջին դարերու աւանդութեան համաձայն է, վաղնջական աւանդութիւնը և նորագոյն հետազօտութիւնները կ'ապացուցանեն թէ Կայիափայի տունը կը գտնուի Սիոնի արևելեան կողմը, Սելոամ գացող ճանապարհին վառիվայրին վրայ, և թէ այդ տան տեղւոյն վրայ շինուած է տաճար մը Պետրոսի թէ՛ ուրացման և թէ ապաշխարութեան յիշատակին համար. նոյն տեղւոյն այժմու սեպհականատէր Ասսոմբսիոնիսդներուն կարծիքն է այս, որուն հակառակը կը գրեն ուրիշ գիտուններ և մասնաւորապէս Ֆրանչիսկեանք։ Թէ՛ աւանդութիւնը և թէ՛ ուխտաւորաց Ուղեգրութիւնները կ'ապացուցանեն թէ յանուն Ս. Պետրոս առաքելոյն երկու եկեղեցիներ կառուցուած են, մին՝ ուրացման տեղւոյն վրայ, որ է Հայոց Ս. Փրկիչ վանքը, միւսն՝ Սիոնի արևելեան կողմը, Սելոամ տանող ճանապարհին վրայ, և ան կը կոչուի Պետրոսի հառաչանաց վանքը։

Այս երկրորդ վանքին առաջինէն զատ ըլլալուն և անոր գոյութեան մասին ուղեգրաց պատմական ծանօթութիւնները մէջբերելէ յետոյ, վանքին հայկական հիմնարկութիւն մը ըլլալուն և անոր նկարագրութեան վերաբերութեամբ օտարազգի երկու մասնագէտ գիտուններու մէկ գրուածքը պիտի թարգմանենք,